# ՆԱՄԱԿՆԵՐ, ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
# ПИСЬМА, ЗАМЕТКИ

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Ես եղբայրակից ժողովուրդների հետ միասին վերջին տարիներս բուռն պատմական զարգացման շրջան ապրող հայ ժողովրդի հոգևոր նվաճումներից է «Պատմա-բանասիրական հանդես»-ը: Նոր կյանք ստեղծող հայ ժողովուրդը «Հանդես»-ի էջերում վեր է հանում իր այսօրվա և անցյալի հուզող հարցերը և այդպիսով իր շուրջը հավաքում նաև սփյուռքահայ պատմա-բանասիրական միտքը:

Ավելի է իրականում հաստատվում այն նշմարտությունը, որ Խորհրդային Հայաստանն է աշխարհով մեկ ցրված բոլոր հայերի հայրենիքը:

Այդ իմաստով միանգամայն գովելի է սփյուռքահայ լավագույն գիտնականների հոդվածների հրապարակումը «Հանդես»-ի էջերում:

Դա ճանապարհ պետք է հարթի սփյուռքահայ առաջադեմ գիտնականների առանձին երկերի հրատարակմանը Խորհրդային Հայաստանում:

Ցանկալի է «Հանդես»-ի համարներում տեսնել սփյուռքահայ գիտնականների պատմա-բանասիրական երկերի ցանկը:

Պետք է ավելի խոր կերպով «Հանդես»-ի հոդվածներում միս և արյուն ստանա գիտական օբյեկտիվությունը: Երևույթների խորքը թափանցելու, փաստերի ազնիվ և բարեխիղճ իմացության վրա հիմնված տեսական ընդհանրացումներ կատարելու ունակությունը պետք է ավելի խորապես թափանցի և՛ այսօրվան, և՛ անցյալին նվիրված հոդվածներում:

Վիճելի է հոդվածների դասակարգումը ըստ «Հանդես»-ի առաջին երկու բաժինների («Հոդվածներ» և «Հաղորդումներ»): «Հաղորդումներ» բաժնում շատ հաճախ տեղավորվում են հոդվածներ, իսկ «Հոդվածներ» բաժնում՝ հաղորդումներ:

Ցանկալի է, որ «Հանդես»-ը ևս, «Տեղեկագրի» նման, լույս ընծայի նաև տպագրված հոդվածների առանձնատիպերը:

Ամբողջ հոգով «Հանդես»-ին ցանկանում եմ նորանոր հաջողություններ հայ պատմաբանասիրական, ինչպես նաև փիլիսոփայական և գեղագիտական մտքի զարգացման ասպարեզում:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ
Լենինյան մրցանակի լաուրեատ,
ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ